ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am

N 314
13 հոկտեմբեր 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2020թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 49-Ա և հոկտեմբերի 8-ի թիվ 50-Ա որոշումները:
Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 49-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հացավան համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 39-Ն որոշումը՝

որոշում եմ

1. Հացավան համայնքի 2020թվականի բյուջեում կատարել վերաբաշխում.
   1) համայնքի բյուջեի 01.01.01. 4112 հոդվածից 100 000 /հարյուր հազար/ դրամ գումարը վերաբաշխել 01.06.01. 4819 հոդված:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ.հոկտեմբերի 06
գ.Հացավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 50-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արայիկ Անդրանիկի Բաղդասարյանի դիմումը,որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հացավան համայքնի 2-րդ փողոց թիվ 23 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում /ծածկագիր 07-041-0019-0002/ 2019թվականին ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի,որակավորված անձի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է,որ Արայիկ Անդրանիկի բաղդասարյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Հացավան համայնքի 2-րդ փողոց թիվ 23 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2019թվականին ինքնակամ կառուցվել են բնակելի տուն 358.5քմ մակերեսով,կաթսայատուն 10.0քմ մակերեսով,ջրավազան 40.0քմ մակերեսով,ս/հանգույց 11.85 քմ մակերեսով,ջրավազան 16.0քմ մակերեսով,հարթակ-աստիճան 5.05քմ մակերեսով,աստիճան 14.92քմ մակերեսով և հենակետ 64.55քմ մակերեսով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9,10,11,13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն,որ Արայիկ Անդրանիկի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող Հացավան համայնքի 2-րդ փողոց թիվ 23 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքացիական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

որոշում եմ

1. Քաղաքացի Արայիկ Անդրանիկի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող Հացավան համայնքի 2-րդ փողոց թիվ 23 հասցեում ինքնակամ կառուցված 358.5քմ մակերեսով բնակելի տունը,10.0քմ մակերեսով կաթսայատունը,40.0քմ մակերեսով ջրավազանը,11.85քմ մակերեսով ս/հանգույցը,16.0քմ մակերեսով ջրավազանը,5.05քմ մակերեսով հարթակ-աստիճանը,14.92քմ մակերեսով աստիճանը և 64.55քմ մակերեսով հենապատը համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացի Արայիկ Անդրանիկի Բաղդասարյանին 2019թվականին կառուցված շինությունների համայնքային բյուջեի **900105220215** հաշվեհամարին վճարել՝

1. բնակելի տուն 358.5 x 10 000 x 0.086=308 310
2.կաթսայատուն 10.0 x 6000 x 0.086=5160
3.ջրավազան 40.0 x 6000 x 0.086=20 640
4. ս/հանգույց 11.85 x 6000 x 0.086=6115
5. ջրավազան 16.0 x 6000 x 0.086=8256
6. հարթակ-աստիճան 5.05 x 6000 x 0.086=2606
7. աստիճան 14.92 x 6000 x 0.086=7699
8. հենապատ 64.55 x 6000 x 0.086=33 307

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արայիկ Անդրանիկի Բաղդասարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2020 թ. հոկտեմբերի 08
գ.Հացավան